Co-funded by the Erasmus+ Programme of the European Union

# Դասախոսների առցանց վերապատրաստման դասընթացի ծրագիր

| ԲՈՒՀ-ի անվանումը | |
|---|---|
| Վերապատրաստման դասընթացի անվանումը | **Ինտեգրված համակցված դասավանդում և ուսուցում** |
| **Վերապատրաստողի անունը**<br>Ֆակուլտետը և ամբիոնը<br>Պաշտոնը<br>Էլ. հասցեն<br>Հեռախոսահամարը | Աննա Ալեքսանյան<br><br>Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի մանկավարժության ամբիոնի դոցենտ<br>anna.aleksanyan@ysu.am<br>091-914-014 |
| Հանդիպման օրերը և ժամերը | • 05/04/2021, 16:00-19:00<br>• 06/04/2021, 16:00-19:00<br>• 07/04/2021, 16:00-19:00 |
| Ուսումնական բեռնվածությունը | 35 ժամ |
| Դասընթացի նպատակը | Դասընթացի նպատակն է դասախոսներին ներկայացնել համակցված դասավանդման գործիքներից մասնավորապես <<նախագծային ուսուցում>>-ը, դրա առանձնահատկություններն ու արդյունավետ կիրառման հնարավորությունները առցանց դասավանդման պայմաններում: |
| Կրթական վերջնար-դյունքները (ԿՎ) | Կրթական վերջնարդյունքները (ԿՎ)<br>***ա. մասնագիտական գիտելիք և իմացություն***<br>• *Սահմանել համակցված ուսուցման կառուցվածքում դրա իրականացման գործիքները,*<br>• *ներկայացնել գործիքներից մասնավորապես <<նախագծային ուսուցում>>-ը,*<br>***բ. գործնական մասնագիտական կարողություններ***<br>• *գնահատել արտաքին ու ներքին, սուբյեկտիվ ու օբյեկտիվ գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ համակցված ուսուցման արդյունավետության վրա միայն առցանց պայմաններում,*<br>• *համադրել և հակադրել առցանց ու լսարանային գործող մոդելների ուժեղ և թույլ կողմերը, հասկանալ դրանց պատճառները,* |

| | |
|---|---|
| | • *գործնականում կիրառել համակցված ուսուցման <<նախագծային ուսուցում>> գործիքը առցանց պայմաններում և վերլուծել սեփական լսարանում դրա կիրառման հնարավորությունները,*<br>• *փաստարկել առցանց միջոցներն ու հետադարձ կապի առանձնահատկությունները, առավելություններն ու թերությունները տարբեր առարկաների դասավանդման ժամանակ <<նախագծային ուսուցում>> իրականացնելիս:*<br><br>***գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)***<br>• *համակարգել այն հմտությունները, որոնք անհրաժեշտ են նորարարական ուսուցման համակարգի անցնելու համար,*<br>• *արժևորել այնպիսի կարողություններ և հմտություններ, որոնք անհրաժեշտ են սույն դասընթացի շրջանակներում ստացած գիտելիքները գործընկերներին փոխանցելու համար:* |
| Դասընթացի մեթոդաբանությունը/ դասավանդման ձևերը | - դասախոսություն՝ շարժասահիկների ուղեկցությամբ գործնական աշխատանքներ |
| Առաջարկվող ուսումնական նյութերը | • Boss, S., & Krauss, J. (2014). *Reinventing project-based learning: Your field guide to real-world projects in the digital age* (Second edition). Eugene, Oregon: International Society for Technology in Education.<br>• Cooper, R., & Murphy, E. (2016). *Hacking project based learning: 10 easy steps to PBL and inquiry in the classroom*. *Hack Learning Series*. Cleveland, OH: Times 10 Publications.<br>• *Darby, F.* (2020), How to be a Better Online Teacher, The Chronicle of Higher Education, pp. 12-23.<br>• *Ni Shé, C., Farrell, O., Brunton, J., Costello, E., Donlon. E., Trevaskis, S., Eccles, S.* (2019), Teaching online is different: critical perspectives from the literature, Dublin: Dublin City University. Doi: 10.5281/zenodo.3479402. |
| Հիմնական տեխնիկական/մեդիա պահանջները | Միանալ համակարգչով, կամերայով և որակյալ ինտերնետ կապով |
| Որակի ապահովումը | Դասախոսների առցանց հարցում և հետադարձ կապի հակիրճ հաշվետվության պատրաստում |

## Դասընթացի նկարագիրը և ընդհանուր բովանդակությունը

| Վերա-պատրաստման օրերը | Հիմնական թեմաները | Ուսումնառման գործողությունները | Հանձնարարությունները |
|---|---|---|---|
| 1-ին օր՝<br>05 ապրիլ<br>2021<br>16:00-19:00 | • ***Ինտեգրում առցանց դասավանդման միջավայրում. ինչպե՞ս լինել հաջողված առցանց դասախոս:*** | • Պարզաբանել դասավանդողի դերը նորարարական ուսուցման տեսանկյունից առցանց ուսուցման պայմաններում<br>• Դասավանդողի դերերը քննարկել առցանց ուսուցման համատեքստում<br>• Վեր հանել դասավանդողի՝ որպես առցանց մոդերատորի, գործառույթները<br>• Ընդգծել դասավանդողի առցանց ռեֆլեքսիա իրականացնելու անհրաժեշտությունը | • Վերլուծել դասավանդողի որպես առցանց մոդերատորի, գործառույթները<br>• Համադրել դասավանդողի առցանց ռեֆլեքսիա իրականացնելու կարողությունների համակարգը այլ մասնագիտական կոմպետենցիաների հետ |
| 2-րդ օր<br>06 ապրիլ<br>2021<br>16:00-19:00 | • ***Սովորողների առցանց ուսուցման գործողությունների պլանավորման գործիքներ. ինչպե՞ս օգնել ուսանողներին սովորել առցանց:*** | • Դիտարկել սովորողների առցանց ուսուցման մոտիվացիայի և ռեֆլեկտիվությանը նպաստող կոնկրետ միջոցներն ու գործիքակազմերը<br>• Վեր հանել դրանց առցանց կիրառման առանձնահատկություններ<br>• Դուրս բերել հնարավոր արդյունքներն ու հետևանքները առցանց պայմաններում | • Քննարկել սովորողների մոտիվացիային և ռեֆլեկտիվությանը նպաստող կոնկրետ միջոցների ու գործիքակազմերի կիրառման հնարավորությունները առցանց դասավանդման ժամանակ<br>• գնահատել արտաքին ու ներքին, սուբյեկտիվ ու օբյեկտիվ գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ սովորողների ռեֆլեկտիվության դրսևորման վրա առցանց ուսուցման պայմաններում: |

| | | | |
|---|---|---|---|
| 3-րդ օր<br>07 ապրիլ 2021<br>16:00-19:00 | • ***Նախագծային ուսուցման զուտ առցանց իրականացման ինտեգրված գործիքները:*** | • Փուլ առ փուլ ներկայացնել նախագծային ուսուցման տեխնոլոգիաները առցանց դասավանդման պայմաններում | • Նախագծային, ներգրավված ուսուցման օրինակներով փաստարկել առցանց միջոցների ու հետադարձ կապի առանձնահատկություննեը, առավելություններն ու թերությունները տարբեր առարկաների դասավանդման ժամանակ: |